



## 220. ՄԻՒՆՈՒՑԱՐ ԱԽԾԻԿԸ

Մըն մարթի մըն ախճիկ ա ինձնմ: Այսինքն պատկերացրեք,  
վեր կյուրիսումըն ա ապրում էտ մարթըտ: Հունց ա պըտահում,  
Սիսիանից կյամ են էտ ախճիկըտ նըշան տինժնմ:

Վեր նըշան են տինժնմ, ասում ա:—Դե, քյինացեք էսհինչ օրը  
կըկյաք, կըտամ:

Էտ վեր մարթիկը քյուննմ են հըրսընքին թաղարիքը տես-  
նան, մըն էլ Ղըփանան են կյամ, վեր էտ ախճիկըտ օզին:

Էլի էտ մարթը խոսկ ա տամ, թա:—Եկեք, էսհինչ օրը կըտա-  
նեք:

Կնեկն ասում ա:—Ա մարթ, մընդ մըն ախճիկ օնենք, պա-  
պըել ե՞ս, կյիժ ե՞ս, էտ հինչ ե՞ս անում:

Էտ գարծումըտ շոնը հաշտնմ ա, տոնան են կյամ տեսնում մընն  
էլ Ղարաբաղան ա եկալ, վեր էտ ախճիկըտ օզի: Տրան էլ ա խոսկ  
տամ, թա կըկյաք:

—Հենդ օրան ետն էլ,—տրանց ասում ա:—կըկյաք տանեք:  
Կնեկը կու ա անում:—Արա, սարսազ ե՞ս, հինչ ե՞ս, ա մարթ,  
պըել ե՞ս, կյիժ ե՞ս, էտ հինչ ե՞ս անում:

Թա ասում ա:—Աստոծ ըղորմած ա, մըն պան տոնս ա կյալիւ:

Էտ մարթըտ մըն թարի ախճիկ օնեն: Վերշապես սհևթա վեր  
սիսիանցուն խոսկ ա տուվալ, էտ իսկական ախճիկը տրանց ա  
տամ:

Անց ա կենում մըն հենդ օր, մին էլ զըփընցիք են կյամ, վեր  
օզին: Էտ մարթը հունց ա պըտահում, տրան մըն հատ շոն ա  
ինժնմ: Տա Քրիստոս խաչակնքում ա, տառնում ա ախճիկ, տամ ա

ուրփընցուց։ Մըն էլ զաթան անց ա կենում հենդ օր, մըն էլ զարարաղցիք են կյամ։

—Ա մարթ, էտ հինչ ե՞ս անում։

Թա ասում ա. —Ա՛ կնեկ վախումել, աստուծ ըղորմած ա, Թրիստոս խաչակընքում ա, տրանց մըն էշ ա ինոնմ, էտ էլ տառնում ա մըն ախճիկ, էտ էլ տամ ա զարարաղցուց։

Ղաթն անց ա կենում մըն վեց ամիս, հոմց ա պըտահում, կնեկը մարթին ասում ա. —Թա խուխոցան նիգալրան չե՞ս։

Թա. —Թա հինչ ե՞մ, մըն-էրկու հաց տիր խուզչինին միշին, քյինամ խուխորցավը դիրավ հընցընեմ։

Եր ա կենում, շատ ա քյաննում, թիշ ա քյաննում, քյաննում ա տուս կյամ Ղարաբաղ, Քյաննում ա տուս կյամ Ղարաբաղ, էտ վեր էշը տուվալ ա տրրանց, Հըրցընում ա, թա ասում ա. —Խնամի, հունց ա, հունց չի, վերը, մեր խոխան լավ ա, ծեր կործերը յոլլա յա՝ տանում, հունց ա.

Թա ասում ա. —Շատ լավ ա, բայց աման պանը աշ ա, մինակ կոխսկին ա ինգյոնմ։

Թա ասում ա. —Վեշ մըն պան, սուվըրիլու վա ծեր խըսլաթըտ։ Կյամ ա տուս կյամ Ղափան, Հըրցընում ա թա. —Ծրախան հունց ա, հունց չի, բա լավ ա, ծեր քյեփավըտ ա քյաննում, վերը, հունց վեր Ղարաբաղ են ասալ, ասում են. —Շատ լավ ա, բայց վեր էն ժանդյ-ժանդյ անիլը վեր տա թորա անի, ուրեմը շատ լավ կինի. Ասում ա. —Վեշ մըն պան, սուվուրիլու վա։

Կյամ ա տուս կյամ Սիսիխան, տեղ վերլապես մըն-էրկու օր կենում ա, խնամին ասում ա. —Դե ես քյինալու վեմ էլի, բա վերը, ինձ ճընապար քըցցեք, մինակ նիգալրան եմ ըրախան հունց ա, թա ասում ա. —Ծրախան շատ լավ ա, վատը չի խնամի։

—Ախճի, դե վեր տըհնց ա, բու հեր քյաննում ա, եր կաց քյինա մըն ժմերուկ պեր կտորի օտեն էտ ախճիկըտ քյաննում ա պադվալը, պըդվալան մըն ժմերուկ ա պիրունմ։

Էտ ձևքան պատրուն ասում ա. —Ա՛ վերթի, քյինա օրիշ ժմերուկ պեր, չէ՞ վեր բու հեր հեռու ճընապա յա քյինալու, անհարմար ա։

Քյաննում ա էտ ախճիկըտ պադվալը, էլլա մըն ժմերուկ դիշին պնկունմ ա, թա. —Ա՛խճի, բա քեզ ըսեցն վե՞լ, էտ խե՞ կումուր ժմերուկ ես պերալ, պատառ մըծավենը պեր։ Էտ հառնըտ մըն էլ ա քյաննում պադվալը։

Խնամին ասում ա. —Այ խնամի, հունց ա՝ խուխեն խասլաթը,

Բա. — Ադա քու տոնը քանդվի, մըն եր կաց բյինմնը տես-  
նանք, վեր պղղվալումը մըն ծըմբռուկա կըման օրիշ ծմերումկ  
կա, չտ մըն ծմերուկըտ իրեթ-շորս հետ ետ տուվի պաղղալը, հա-  
լալ ծծկեր ա էլի, ասեց վել, թա մեր պղղվալումը մըն թաքյ  
ծմերուկ կա:

Եկր տոն: Եկը տոն, կնեկը թա, ասում ա. — Թա խոխեքը հունց  
ե՞ս տեսալ:

Թա, ասում ա. — Լավ են, էշը էշ ա, շոնը շոն ա, հալալ ծըծ-  
կերն էլ հալալ ծծկեր ա:

